

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Հունիսի 2-ին, չորեքշաբթի.—Այսօր, ժամը 17-ին, Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ, Մայր Աթոռի միաբանությունը մեկնեց Բյուրականի «Հայկաշէն» հայրապետական ամառանոց, որտեղ արդեն ավարտվել են շինարարական և սենյակների ու դահլիճների կահավորման աշխատանքները:

Այս տարի, սեպտեմբերին, Վեհափառ Հայրապետի գահակալության 20-ամյակի օրերին, հայրապետական ամառանոցը լրիվ ու ճաշակով կահավորված, պատրաստ կլինի իր հարկի տակ հյուրընկալելու բարերարներին՝ ամերիկահայ տեր և տիկին Հայկ—Ալիս Գավուքճյաններին ու Մայր Աթոռի այլ հյուրերի:

Նույն օրը, Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ, Մայր Աթոռի միաբանությունը հանգամանորեն ծանոթանում է «Հայկաշէն» ամառանոցի բոլոր հարկաբաժիններին, կահավորված դահլիճներին ու սենյակներին, ողջ շրջապատին:

Ժամը 20-ին Վեհափառ Հայրապետը բարեհաճում է ամառանոցի գեղեցիկ սեղանատանը Իրեն սեղանակից դարձնել Մայր Աթոռի միաբաններին:

Ընթրիքի ժամանակ, այս ուրախ առիթով, Հայոց Հայրապետին սրտագին խոսքերով շնորհավորում են լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը, դիվանապետ տ. Արսեն եպս. Բերբերյանը, ս. Գեղարդ վանքի վանահայր տ. Վահան եպս. Տերյանը, Ծիրակի թեմի առաջնորդ տ. Նարեկ եպս. Ծաքարյանը, վրահայոց թեմի առաջնորդ տ. Գևորգ եպս. Սերայդարյանը, Մայր Աթոռի միաբան տ. Թորգոմ վրդ. Մուշեղյանը, տ. Ռուբեն ավագ քհն. Մարտիրոսյանը՝ հանուն Արարատյան թեմի:

Մայր Աթոռի միաբանները, շարականների ու հոգևոր երգերի կատարումով, ավելացնում են միաբանական ընթրիքի խանդավառությունը:

Ընթրիքն ավարտվում է Վեհափառ Հայրապետի օրհնությամբ և խմբովին արտասանված «Հայր մեր»-ով:

*
* *

Հունիսի 6-ին, կիրակի.—Հոգեգալուստ (Պենտեկոստէ).

Այսօր Մայր տաճարում, օրվա մեծ տոնի առիթով, հանդիսավոր ս. պատարագ է

մատուցում Վեհափառ Հայրապետը և հոգեշունչ քարոզով վեր հանում Հոգեգալստյան մեծ իրադարձության հոգևոր, պատմական նշանակությունը եկեղեցու կազմակերպության անցնող 20 դարերի ընթացքում՝ քրիստոնեական քաղաքակրթության և մշակույթի զարգացման պատմության մեջ:

*
* *

Հունիսի 8-ին, երեքշաբթի.—Այսօր հոգևոր ճեմարանի ուսանողությունը, տեսչի և դասախոսական կազմի ընկերակցությամբ, չորսօրյա զբոսապտույտի մեկնեց Ծաղկաձոր, Սևան, Դիլիջան, Հաղարծին, Գոշավանք, Պարզ լիճ, Ջուխտակ վանք, Կիրովական, Սպիտակ և Ապարան:

*
* *

Հունիսի 12-ին, շաբաթ.—Այսօր, ժամը 15-ին, Մայր տաճար են այցելում հյուրաբար Հայաստանում գտնվող Հնդկաստանի հանրապետության պրեմիեր-մինիստր Ինդիրա Գանդին և նրան ընկերակցող անձինք:

Մայրավանքի արևելյան դարպասի մոտ մեծահարգ հյուրին դիմավորում և Մայր տաճար են առաջնորդում լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանն ու տ. Վազգեն վրդ. Թադոյանը:

Հարգելի հյուրին և նրան ընկերակցող անձանց անհրաժեշտ բացատրություններ են տրվում ս. Էջմիածնի պատմության մասին, որպես Հայաստանյայց առաքելական եկեղեցու կրոնական դարավոր կենտրոնի, հայ հոգևոր մշակույթի և հայրենասիրական օջախի:

Հնդկաստանի հանրապետության պրեմիեր-մինիստր Ինդիրա Գանդին ու նրան ուղեկցող անձինք հրաժեշտ են առնում Մայր տաճարից լավագույն տպավորություններով:

Հարգելի հյուրերը դեպի Երևան իրենց վերադարձի ճանապարհի վրա այցելում են նաև ս. Հռիփսիմե տաճար:

*
* *

Հունիսի 13-ին, կիրակի.—Սկիզբն Յարութեան կիրակէից. Յիշատակ Եղիայի մարգարէին.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Նշան քհն. Բելլերյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Հունիսի 14-ին, երկուշաբթի.—Տօն սրբոց կուսանացն Հռիփսիմեանց.

Այսօր, օրվա տոնի առիթով, ս. Հռիփսիմե տաճարում պատարագում է վանահայր տ. Եղիշե քհն. Բաղրամյանը, և քարոզում է տ. Հովսեփ քհն. Հակոբյանը՝ «Անձինք նուիրեալք սիրոյն Քրիստոսի» կոմիտասյան շարականի բնաբանով:

*
* *

Նույն օրը ուխտավորաբար Մայր Աթոռ է ժամանում Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ տ. Ոսկան ծ. վրդ. Գալբակյանը:

*
* *

Հունիսի 15-ին, երեքշաբթի.—Տօն սրբոց կուսանացն Գայիանեանց.

Այսօր, օրվա տոնի առիթով, ս. Գայանե տաճարում պատարագում է վանահայր տ. Գուրգեն քհն. Աշուրյանը և քարոզում հետևյալ բնաբանով՝ «Երանի այնոցիկ որք սուրբ են սրտիւք, զի նոքա զԱստուած տեսցեն» (Մատթ. Ե 8):

*
* *

Հունիսի 17-ին, հինգշաբթի.—Տօն սրբոյն Յովհաննու Կարապետին և Աթանագինեայ եպիսկոպոսին.

Այսօր սուրբ Շողակաթ տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Հովսեփ քհն. Հակոբյանը, և քարոզում է տ. Եղիշե քհն. Բաղրամյանը՝ «Արիւն մարտիրոսաց, սերմն եկեղեցւոյ» բնաբանով:

*
* *

Հունիսի 20-ին, կիրակի.—Տօն կաթուղիկէ ս. Էջմիածնի.

Մայր Աթոռի տոնի առթիվ Մայր տաճարում հանդիսավոր սուրբ պատարագ է մատուցում Վեհափառ Հայրապետը և քարոզում «Ի վերայ Աջոյն և սուրբ Էջմիածնի ամենայն ազգն հայոց կապեալ կայ» (Առաքել Դավրիժեցի) բնաբանով:

«Հայր մեր»-ից հետո կատարվեց «Մաղթանք սուրբ Էջմիածնի»՝ Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ:

Հավարտ սուրբ պատարագի տեղի ունեցավ հոգեհանգստյան պաշտոն, Հայոց Հայրապետի նախագահությամբ, լիբանանահայ ծանոթ մտավորական և հասարակական գործիչ Հարություն Մերեճյան—Կուժունու մահվան քառասունքի առթիվ:

Վեհափառ Հայրապետն այս առթիվ հուզումով ոգեկոչեց հանգուցյալ ազգային գործչի հիշատակը՝ վեր հանելով նրա ազգային-հայրենասիրական վաստակը ընտիրուքի և հատկապես Լիբանանի հայ համայնքի կյանքում ու մի անգամ ևս իր վշտակցությունը հայտնեց հանգուցյալի սրգակիր ընտանիքին և նրա գործակից ընկերներին:

Հոգեհանգստյան արարողությանը ներկա էին հանգուցյալի հայրենաբնակ եղբայրներն ու հարազատները և հավատացյալների մի հոծ բազմություն:

Հավարտ եկեղեցական արարողությանց Վեհափառ Հայրապետը Վեհարանում ընդունեց հանգուցյալի հարազատներին ու բարեկամներին և անձամբ ցավակցություն հայտնեց՝ մաղթելով հոգվո մխիթարություն Ճերեճյան ընտանիքին:

*
* *

Հունիսի 22-ին, երեքշաբթի.—Այսօր, ժամը 18-ին, Բյուրականի «Հայկաշէն» ամառանոցում Վեհափառ Հայրապետի հրավերով տեղի է ունենում հանդիպում Մայր Աթոռին առընթեր ճարտարապետական հանձնաժողովի անդամների հետ:

Հանդիպումից հետո տրվում է ճաշկերույթ, որին ներկա են լինում տ. Հուսիկ, տ. Վահան, տ. Արսեն եպիսկոպոսները և ճարտարապետական հանձնաժողովի անդամները, Մայր Աթոռի ճարտարապետներ և ուխտավորաբար Հայաստանում գտնվող տեր և տիկին Երվանդ Ազատյանը՝ ԱՄՆ-ից:

Ընդունելությանը ներկա են լինում նաև ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Սարգիս Գասպարյանը և տեղակալ Անդրանիկ Հասրաթյանը:

*
* *

Հունիսի 23-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան ժամը 18-ին, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը: Հատենի ժողովի Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանը խոսում է վերջերս Ավստրալիա կատարած իր հովվական այցելության առիթով թեմի եկեղեցական, մշակութային, ազգային-հայրենասիրական գործունեության մասին:

*
* *

Հունիսի 25-ին, ուրբաթ.—Այսօր, Վեհափառ Հայրապետի հրավերով, ուխտավորաբար Ալեքսանդրիայից Մայր Աթոռ է ժամանում տ. Զավեն եպս. Չինչինյանը:

*
* *

Հունիսի 27-ին, կիրակի.—Այսօր, Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում ԱՄՆ-ից ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող տ. Ներսես քհն. Ճեպեճյանը և քարոզում ս. Ներսես Պարթև Հայրապետի կյանքի և գործունեության մասին:

Տ. Ներսես քահանան այս տարի էլ Մայր Աթոռ է առաջնորդել ԱՄՆ-ի հայոց արևելյան թեմի երիտասարդաց կազմակերպության 37 անդամ-անդամուհիների:

ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄՆԵՐ

Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանի միջնորդությամբ, քահանայական իրենց բարեխիղճ և ազնիվ աշխատանքների համար, հայրապետական կոնդակներով քահանայական լանջախաչ կրելու իրավունք ստացան հետևյալ արժանապատիվ քահանա հայրերը.

1. Արժանապատիվ տ. Եղիշե քահանա Բաղրամյան
   (վանահայր ս. Հռիփսիմե վանքի).
2. Արժանապատիվ տ. Գուրգեն քահանա Աշուրյան
   (վանահայր ս. Գայանե վանքի).
3. Արժանապատիվ տ. Հովսեփ քահանա Հակոբյան
   (Մայր Աթոռի դիվանատան քարտուղար).
4. Արժանապատիվ տ. Ղուկաս քահանա Հակոբյան
   (Կիրովաբադի ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու ծիսակատար).

Ծաղկյա փիլոն կրելու իրավունք ստացավ.

5. Արժանապատիվ տ. Նշան քահանա Բեյլերյան
   (Մայր տաճարի ծիսակատար):